Ապրիլի 18-ին տեղի ունեցավ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կարգապահական կոմիտեի հերթական նիստը՝ ՀՖՖ Կարգապահական կոմիտեի անդամ Ռոբերտ Դալլաքյանի նախագահությամբ՝

ՈՐՈՇՎԵՑ՝

Արտոնագրման փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը խախտելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 17-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝
1.1 «Շիրակ» ֆուտբոլային ակումբին տուգանել 100000 դրամ:
1.2. «Գանձասար» ֆուտբոլային ակումբին տուգանել 100000 դրամ:

13/04/13թ. «Շիրակ»-«Արարատ» խաղին պատգարակը տեղափոխող աշխատակիցների չլինելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 26-րդ կետի համաձայն՝ «Շիրակ» ֆուտբոլային ակումբին տուգանել 50000 դրամ:

15/04/13թ. «Բանանց-2»-«Շիրակ-2» խաղը «Շիրակ-2» թիմի կողմից չտեսագրելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 23-րդ կետի համաձայն՝ «Շիրակ» ֆուտբոլային ակումբին տուգանել 100000 դրամ:

15/04/13թ. «Իմպուլս-2»-«Փյունիկ-2» խաղին «Փյունիկ-2» թիմի կազմից բարձրագույն խմբում հայտավորված ֆուտբոլիստ (Վահագն Մանոյանի) խաղացնելու, Մրցումների կանոնակարգի հոդված 10-րդ կետ 13-րդ խախտելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 22-րդ կետի համաձայն՝ «Փյունիկ-2» թիմին գրանցել տեխնիկական պարտություն, «Փյունիկ» ֆուտբոլային ակումբին տուգանել 100000 դրամ:

11/04/13թ. «ԽՄՕՄՄ-97»-«Փյունիկ-Մրգաշատ-97» խաղին «ԽՄՕՄՄ-97» թիմի ֆուտբոլիստ Հովհաննես Մարտիրոսյանի հեռացման (մրցավարին վիրավորելու համար) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ որակազրկել մինչև մանկապատանեկան ֆուտբոլի և ֆուտզալի մրցաշրջանների ավարտը, ԽՄՕՄ մարզադպրոցին տուգանել 40000 դրամ:

11/04/13թ. «Լ.Արցախ-97»-«Իմպուլս-1-97» խաղին «Իմպուլս-1-97» թիմի չներկայանալու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ «Իմպուլս-1-97» թիմին գրանցել տեխնիկական պարտություն, «Էրեբունի-Դիլիջան» մարզական ակումբին տուգանել 100000 դրամ:

12/04/13թ. «Բանանց-95»-«Գանձասար-95» խաղին «Գանձասար-95» թիմի չներկայանալու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ «Գանձասար-95» թիմին գրանցել տեխնիկական պարտություն, «Գանձասար» ֆուտբոլային ակումբին տուգանել 100000 դրամ:

13Գ004 խաղին «Շիրակ-2-2000» թիմի կազմում չգրանցված ֆուտբոլիստ մասնակցելու համար, ՀՖՖ-ի մանկապատանեկան մրցումների անցկացման կանոնակարգի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «Շիրակ» ֆուտբոլային ակումբին տուգանել 3000 դրամ:

12/04/13թ. «Թալգրիգ-ֆզ»-«Շահումյան-ֆզ» խաղի նախախաղային խորհրդակցությանը «Շահումյան-ֆզ» թիմի ներկայացուցչի չներկայանալու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 20-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ Շահումյան ֆուտբոլային ակումբ հասարակական կազմակերպությանը տուգանել 15000 դրամ:

14/04/13թ. «Ավան ԵԿՄ-97»-«Թալգրիգ-1-97-ֆզ» խաղը չկայանալու (ոստիկանության աշխատակիցների և բժշկի բացակայության պատճառով) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 20-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ «Ավան ԵԿՄ-97» թիմին գրանցել տեխնիկական պարտություն, ՀՀ երկրապահ կամավոր միություն Երևան Ավանի տարածքային բաժանմունքին տուգանել 10000 դրամ: